ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գեղագիտական դաստիարակության զարգացումը 5-րդ դասարանում

Կատարող՝ Լաուրա Ժամակոչյան

/անուն, ազգանուն, հայրանուն /

«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, երաժշտություն

/դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

/անուն, ազգանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն…….…..…3

1. Գեղագիտական դաստիարակության որպես անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական բաղադրիչ……4

2.Արվեստի դերը դպրոցականների դաստիարակության գործընթացում……7

Եզրակացություն…….….…..15

Գրականության ցանկ…….……..…16

Ներածություն

Շրջապատող աշխարհում, արվեստի ստեղծագործություններում գեղեցիկը նկատելու և ընկալելու կարողությունը կարևոր նախապայման է՝ մարդու հոգևոր աշխարհի ձևավորման ու զարգացման համար:

Դեռևս մանուկ հասակից գույների և հնչյունների բազմազանության մեջ երեխան բացահայտելով հետազոտում է շրջապատող աշխարհը. Նա հրճվում է բնության գունագեղությամբ և իր համար հայտնաբերում գեղեցիկը: Անձի հոգևոր զարգացման և կայացման մեջ գեղագիտական ասպեկտի նշանակալիության արժևորումը դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներից է:

Գեղագիտական դաստիարակությունը պետական նշանակություն ունեցող կարևորագույն հարց է և այսօր այդ խնդիրն առավել լրջությամբ դրված է ուսուցիչների առջև: Գեղագիտական դաստիարակությունը, որն իրականացվում է արվեստի միջոցով, զարգացնում է իրականության ու արվեստի մեջ գեղեցիկը ճիշտ ընկալելու և ըմբռնելու ընդունակությունները, բարձր ճաշակն ու կարծիքը, գեղեցիկի ստեղծմանը գործուն մասնակցություն ունենալու պահանջը: Մարդու մեջ գեղեցիկի զգացումը սահմաններ չունի, իսկ գեղարվեստը ազգի հոգու դրսևորումն է:

Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է անձի զգացմունքային և ինտելեկտուալ ոլորտների ձևավորմանը, հանրության մեջ վարքի և շրջակա աշխարհի հետ նրա համագործակցային հարաբերությունների մշակմանը, անձի ներդաշնակ և բնական սոցիալականացմանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է արդի պայմաններում գեղագիտական դաստիարակության առանձնահատկություն-ների ուսումնասիրությամբ, որը դպրոցում կարևոր նշանակություն է ստանում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, բացահայտել գեղագիտական դաստիարակության զարգացումը 5-րդ դասարանում՝ Արվեստ թեմայի շրջանակներում:

Աշխատանքի խնդիրներն են ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները 5-րդ դասարանում և ներկայացնել արվեստի դերը դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործընթացում:

1.Գեղագիտական դաստիարակության որպես անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական բաղադրիչ

Հանրակրթական դպրոցներում, ժամանակակից կրթական միջավայրի պայմաններում, զարգացման և դաստիարակության գործընթացն ապահովում է յուրաքանչյուր աշակերտի ընդգրկումը տարատեսակ գործունեության մեջ, որի իրականացմամբ որոշվում է երեխայի գեղագիտական որակների արդյունավետությունը:[1]:

Արդի ժամանակներում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործընթացները, աշակերտական կոլեկտիվների գործունեությունը, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը:

Դաստիարակության բովանդակությունը ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն:

Հայտնի է, որ անհնար է երեխային լիարժեք կրթել և դաստիարակել առանց նրա մեջ գեղեցիկի զգացողության ձևավորման:

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ համարվում է նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն, կրթվածություն: Արվեստը օգնում է նրան պայքարել, հաղթել, ցանկացած գործունեության մեջ ոգևորող սկիզբ ներդնել: Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի ու դաստիարակվողի համատեղ գործունեության գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական մշակույթ ձևավորելու համար:

Ռ.Աթայանը, իր «Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը» գրքում գեղագիտական դաստիարակության սահմանումը տալիս է հետևյալ կերպ.

[1] Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:

«Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն, կրթվածություն: Գեղեցիկին հաղորդակից լինելով, մարդը հանգիստ է գտնում: Արվեստը օգնում է նրան պայքարել, հաղթել, ցանկացած գործունեության մեջ ոգևորող սկիզբ ներդնել: Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի ու դաստիարակվողի համատեղ գործունեության գործընթաց է, իսկ գեղարվեստական դաստիարակությունն կազմում է գեղագիտական դաստիարակության կարևորագույն մասն միայն» [2]:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից), սական որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը:

Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով[3]:

Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ բացակայում է միասնական մոտեցումը, և տարբեր հեղինակների կողմից այն բնորոշվում է տարբեր կերպ. որպես իրականության նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության

[2] Աթայան Ռ.Ա.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան,1974, էջ 5:

[3] Միքայելյան Համլետ, Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը, <<Մաթեմատիկան դպրոցում>>, Գիտամեթոդական ամսագիր, Թիվ 4(107), 2016, էջ 3-18:

ձևավորման նպատակաուղղված գործընթաց, որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացում, որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերության ձևավորում, որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորման գործընթաց և այլն: Նկատվող այս անհստակության, ոչ միասնական մոտեցման հիմնական պատճառները երկուսն են՝ անհստակությունը և ոչ միասնական մոտեցումը ինչպես գեղեցիկի, այնպես էլ դաստիարակության բնորոշման հարցերում:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար[4]:

Ռ.Աթայանը նշում է, որ գեղագիտական դաստիարակությունը ավելի լայն հասկացություն է, քան գեղարվեստական դաստիարակությունը: Վերջինս կազմում է գեղագիտական դաստիարակության կարևորագույն մասը միայն[5]:

Լայն իմաստով գեղագիտական դաստիարակություն ասելով հասկանում են մարդու մեջ իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի նպատակաուղղված ձևավորումը: Գեղագիտորեն դաստիարակված լինելը համարվում է գեղագիտական դաստիարակության նպատակն ու արդյունքը: Այն կարող է դիտարկվել որպես անձի գեղագիտական մշակույթի ձևավորման որակական ցուցիչ, որը համարվում է նրա հոգևոր դաստիարակության բաղադրիչը:

Գեղագիտական դաստիարակությունը օգնում է ձևավորելու նոր մարդու ամբողջական անձնավորությունը՝ իբրև իր բարոյական մտքերով ազնիվ մարդու, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը կյանքում, ամենատարբեր բնույթի գործունեության մեջ, որ պայքարում է հանուն գեղեցկության:

---

[4] Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Եր.,1979, էջ 169:
[5] Աթայան Ռ.Ա., Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1974, էջ 5:

2.Արվեստի դերը դպրոցականների դաստիարակության գործընթացում

Գեղագիտական գործունեության միջուկը կազմում է արվեստը: Այստեղ մարդու գործունեությունը ոչ միայն ամբողջովին ներթափանցում է համամարդկային, գեղագիտական բովանդակությամբ, այլև հասնում է գեղագիտականի բարձրագույն ձևին՝ դառնում է գեղարվեստական գործունեություն, որն իր լավագույն դրսևորումներում ստեղծում է մարդկանց համար բոլոր ժամանակներում իրենց նշանակությունը պահպանող անմահ գլուխգործոցներ:

Իսկ ինչպիսին է արվեստի դերը ժամանակակից աշխարհում: Մի ժամանակ Ֆ.Մ.Դոստոևսկին հռչակեց. «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»: Սակայն ինչու այն մինչև հիմա չի փրկել նրան: Միթե արվեստի քիչ գլուխգործոցներ կան մարդկության պատմության մեջ: Սվիթը «Գուլիվերի ճանապարհորդության» հրատարակությունից հետո սպասում էր աշխարհի ուղղմանը, չարիքից, անարդարությունից նրա փրկությանը: «Ռևիզորը» չոչնչացրեց ո՛չ կաշառակերներին, ո՛չ բյուրոկրատներին: Շեքսպիրը չփրկեց աշխարհը յագոներից, Պուշկինը՝ սալիերիներից, Մոլիերը՝ մարդատյացներից ու սուր ճգնավորներից: Գ. Ուսպենսկին պատմում էր, թե ինչպես Միլոսյան Վեներան ուղղել է կյանքի կողմից ճնշված, կքված մարդկանցից մեկին: Բայց որքան մարդիկ մնացին կքված, կոտրված նույն այն աշխարհում, որտեղ կա և՛ Միլոսյան Վեներա, և՛ Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը»:

Հասարակության մեջ շատ ուժեր են գործում, և գեղեցկությունը, արվեստը սոսկ մեկն է դրանցից: Գեղեցկությունն ընդունակ է «փրկելու աշխարհը», բայց այն դեպքում, երբ մյուս ուժերի հասարակականորեն խորտակիչ գործողություններն արմատից չեն ոչնչացնում այն ամենը, ինչ ստեղծում է արվեստը:

Արվեստի դերն ու նշանակությունը գեղագիտական դաստիարակության մեջ անվիճելի է: Արվեստը ամենավառ և պատկերավոր կերպով բացահայտում է մարդուն իրական գեղեցկության աշխարհը, ձևավորում անհատի համոզմունքները, ազդում վարքի վրա և գեղագիտական մեծ հաճույք պատճառում նրան: Սակայն արվեստի կողմից նրա դերի դրսևորման մեջ ավտոմատիզմ չկա: Այն կարող է մինչև վերջ

չավարտել իր առաքելությունը՝ որպես հոգևոր հարստության աղբյուր, եթե պարզվի, որ մարդը անպատրաստ է դրա ընկալմանը, չի ստանում դրա համար անհրաժեշտ նվազագույն գեղարվեստական գիտելիքները, չի սովորում տեսնել, զգալ և հասկանալ գեղեցկությունը կյանքում և արվեստում:

Արվեստի՝ որպես դաստիարակության միջոցի, յուրահատկությունը կայանում է նրանում, որ արվեստում «կենտրոնացած, խտացված է մարդու ստեղծագործական փորձն ու հոգևոր հարստությունը»: Դրա բովանդակությունը պետք է ընդգրկի երեխաների ուսումնասիրությունն ու ծանոթացումը արվեստի տարբեր տեսակների և ժանրերի՝ երաժշտության, կերպարվեստի հետ: Գեղագիտական դաստիարակության էական կողմը նաև գեղեցկության իմացությունն է կյանքում, բնության մեջ, մարդու բարոյական բնավորության և վարքի մեջ:

Հատկապես բեղմնավոր է մանկության տարիներին արվեստի հետ շփումը:

Արվեստի երևույթների հետ երեխայի շփման գործընթացում կուտակվում են բազմաթիվ, այդ թվում՝ գեղագիտական տպավորություններ:

Արվեստը լայն ու բազմակողմանի ազդեցություն է թողնում մարդու վրա: Նկարիչը, ստեղծելով իր գործը, խորապես ուսումնասիրում է կյանքը, սիրում, ատում, կռվում, հաղթում, կործանվում, ուրախանում ու տառապում կերպարների հետ միասին:

Արվեստի ֆենոմենի հետ հանդիպումը երեխային անմիջապես չի դարձնում հոգեպես հարուստ կամ գեղագիտական զարգացած, բայց գեղագիտական փորձառությունը երկար է հիշվում, և երեխան միշտ ցանկանում է նորից ծանոթ հույզեր զգալ:

Արվեստը կարող է չկատարել իր դաստիարակչական դերը, եթե երեխան չստանա պատշաճ գեղարվեստական զարգացում և կրթություն, չսովորի տեսնել, զգալ և հասկանալ գեղեցիկը արվեստում և կյանքում:

Ակնհայտ է, որ եթե մարդու կյանքում չօգտագործես մանկության այդքան բեղմնավոր շրջանը իրական արվեստին ծանոթանալու համար, ապա ապագայում այդ բացը լրացնելը շատ ու շատ դժվար կլինի: Անհատականության ձևավորման ամենավաղ ժամանակաշրջաններում դրված գեղարվեստական ներուժը հետագա հասուն կյանքում հանդիսանում է միջնորդ օղակ, որի միջոցով արվեստն իր

ազդեցությունն է թողնում սոցիալական վարքագծի բոլոր կարևոր տեսակների վրա: Մանկավարժության և հոգեբանության բնագավառի գիտնականներն իրենց հետազոտություններում հաստատում են սերտ հարաբերությունների առկայությունը արվեստում ներգրավվածության և նրա ստեղծագործական և ճանաչողական ունակությունների զարգացման, նրա բարոյական վերաբերմունքի ձևավորման, սոցիալական գործունեության և հաղորդակցության բարձր մշակույթի միջև, այսինքն. ինչն է կազմում անհատի հոգևոր աշխարհը: «Արվեստ», - նշում է հայտնի հոգեբան Լ.Ս. Վիգոտսկին մեր վարքագծի կազմակերպումն է ապագայի համար, առաջընթաց, պահանջ, որը կարող է երբեք չիրականանալ, բայց որը ստիպում է մեզ ձգտել մեր կյանքում այն ամենի համար, ինչ թաքնված է դրա հետևում... Արվեստը կարելի է անվանել ռեակցիա՝ հիմնականում ուշացած, քանի որ դրա գործողության և դրա կատարման միջև միշտ կա քիչ թե շատ երկար ժամանակ» [6]:

Արվեստը պատճառում է ամենաբարձր հոգեկան ապրումներից մեկը՝ գեղագիտական հաճույք: Հենց այդ մասին է Ա.Ս.Պուշկինն ասել. «Մտացածին բանի վրա արցունքներ եմ թափում», «ներդաշնակությամբ արբենում»: Սակայն առանց գեղագիտության չկա գեղարվեստական կրթվածություն, իսկ առանց վերջինիս չկա հաճույք արվեստից[7]:

Երեխայի կյանքի փորձն իր զարգացման տարբեր փուլերում այնքան սահմանափակ է, որ երեխաները շուտ չեն սովորում ընդհանուր զանգվածից առանձնացնել համապատասխան գեղագիտական երևույթները: Ուսուցչի խնդիրն է երեխայի մեջ սերմանել արվեստը վայելելու կարողություն, զարգացնել գեղագիտական կարիքները, հետաքրքրությունները, դրանք հասցնել գեղագիտական ճաշակի մակարդակին, իսկ հետո՝ իդեալին:

Երաժշտությունն ու երգը երեխաների կյանքի մեջ մտնելով նրանց ապրումների ու զգացմունքների արտահայտությունն են հանդիսանում, որի շնորհիվ նրանց հուզական փորձը ավելի հարուստ է դառնում: Երգի և երաժշտության պարապմունքները դպրոցում զարգացնում են երեխաների երաժշտական լսողությունը, երաժշտական հիշողությունը ու ճաշակը, զինում որոշ գիտելիքներով

[6] https://infourok.ru/iskusstvo-v-sisteme-esteticheskogo-vospitaniya-lichnosti-2704363.html
[7] Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1982, էջ 10:

երաժշտության ու երգի բնագավառում, ծանոթացնում կոմպոզիտորների ստեղծագործություններին, երաժշտական արվեստի ուղղություններին ու ժանրերին:

Երեխայի երաժշտական կուլտուրայի աճը և նրա երաժշտական ընդունակությունների զարգացումը անհամեմատ արագ է ընթանում, եթե ընտանիքում ու դպրոցում այդ ուղղությամբ հատուկ ուշադրություն են դարձնում երեխաների երաժշտական կատարողական ստեղծագործության զարգացումը համարվում է գեղագիտական դաստիարակության ողջ համակարգի անքակտելի մասը:

Ազգային երաժշտության հետ շփումը հարստացնում է երեխայի ներաշխարհը, առավել ամբողջական դարձնում նրա պատկերացումները գեղեցիկի, վեհի, կատարյալի վերաբերյալ, ի վերջո՝ ձևավորում է նրա բարոյական կերպարը: Երաժշտության ուսուցիչը պետք է հոգ տանի դասարանի երաժշտական գրադարանը ազգային մանկական երգերի ձայներիզներով համալրելու մասին:

Արվեստն ուսումնասիրող գիտությունների համալիրն ընդգրկում է գրականությունը, երաժշտությունը, թատերագիտությունը, կինոգիտությունը, ինչպես նաև տարածական արվեստները (ճարտարապետություն, գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, դեկորատիվ-կիրառական արվեստն և այլն): Արվեստի այս տեսակներն ունեն իրենց առանձնահատկություններն ու ազդեցության ոլորտները: Դրանցից օրինակ գեղարվեստական գրականությունը հասարակության հոգևոր կյանքի կարևոր բնագավառներից է: Այն, ինչպես և արվեստի մյուս տեսակները, իրականության ճանաչման, արտացոլման և գաղափարական գնահատման ձևերից է: Գրական երկերն ընթերցողի մեջ ստեղծում են որոշակի գեղագիտական իդեալներ: Լինելով խոսքի արվեստ, օգտվելով լեզվի բազմազան միջոցներից, գրականությունը հնարավորություն ունի արտացոլելու իրականությունը շատ ավելի լայն ու բազմակողմանի, քան արվեստի մյուս տեսակները: Լեզվի օգնությամբ գրողը կարող է թափանցել մարդկային հարաբերությունների ամենաբարդ ոլորտները, զգացմունքի և մտքի ամենանուրբ ծալքերը, հասնել դրանց գեղարվեստական վերարտադրության: Գրականությունը մեծ դեր է խաղում նաև մյուս արվեստների զարգացման մեջ՝ տալով նրանց թեմաներ և սյուժեներ: Բնական

արվեստներն առհասարակ անհնար են առանց գրական հիմքի (պիեսը՝ թատրոնում, սցենարը՝ կինոյում, լիբրետոն՝ օպերայում և այլն):

Գեղարվեստական գրականության ստեղծած կերպարներն օգնում են մարդկանց խորապես հասկանալու կյանքը, սովորեցնում են տեսնել գեղեցիկը, զարգացնել, գեղարվեստական ճաշակը: Գրականությունն ունի առաջատար տեղ և էական ազդեցություն՝ արվեստի մյուս տեսակների վրա:

Գոյություն ունեն արվեստի մի քանի տեսակներ՝ գրականություն, երաժշտություն, տեսողական արվեստ, թատրոն, կինո, խորեոգրաֆիա, ճարտարապետություն, դեկորատիվ արվեստ և այլն: Արվեստի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունն այն է, որ այն առանձնահատուկ ազդեցություն է թողնում մարդու վրա իր հատուկ գեղարվեստական միջոցներով ու նյութերով՝ բառ, ձայն, շարժում, գույներ, տարատեսակ բնական նյութեր: Երաժշտությունն, օրինակ, ուղղակիորեն ուղղված է մարդու երաժշտական զգացողությանը: Քանդակը շոշափում է մարդու հոգու այլ լարերը: Այն մեզ տեսողականորեն փոխանցում է մարմնի ծավալուն, պլաստիկ արտահայտչությունը: Այն ազդում է մեր աչքի՝ գեղեցիկ ձևը ընկալելու ունակության վրա:

Արվեստի ամեն տեսակ և առհասարակ արվեստ ուղղված է ցանկացած մարդկային անհատականության: Իսկ սա ենթադրում է, որ ցանկացած մարդ կարող է հասկանալ արվեստի բոլոր տեսակները: Սրա մանկավարժական իմաստը մենք հասկանում ենք նրանով, որ հնարավոր չէ երեխայի դաստիարակությունն ու զարգացումը սահմանափակել միայն արվեստի մեկ տեսակով:

Միայն դրանց համադրումը կարող է ապահովել նորմալ գեղագիտական դաստիարակություն: Սա, իհարկե, ամենևին չի նշանակում, որ մարդը պետք է անպայման նույն սերը ապրի արվեստի բոլոր տեսակների նկատմամբ: Լիարժեք դաստիարակությունն անհնար է առանց մարդկային ընկալման և առանց նրա վրա արվեստների ողջ համակարգի ազդեցության: Այսպես երեխայի հոգևոր ուժերը քիչ թե շատ հավասարաչափ կզարգանան:

Արվեստի մյուս տեսակներից երաժշտական արվեստն ունի ներգործության հսկայական ուժ: Երաժշտությունը ևս դպրոցում ունի իր ուրույն դերը և ուրիշ ոչ մի

առարկա չի կարող գեթ մասամբ փոխարինել նրան երեխաների դաստիարակության մեջ:

Երաժշտությունը երաժշտական և գեղագիտական փորձառությունների փոխանցման վառ, զգացմունքային միջոց է: Երաժշտական կրթությունը երեխաների հետ աշխատանքում վաղուց աչքի է ընկել որպես ինքնուրույն առարկա: Սա մշակութային կամ գոնե երաժշտական առումով գրագետ ունկնդիրների կրթությունն է:

Երաժշտության ներգործությունը մանկան զգացմունքային աշխարհի վրա խոր է և անմիջական: Լավ երաժշտությունը պարզ ունկնդրման դեպքում ևս հուզում է, հափշտակում, ծնունդ տալիս բազմապիսի ապրումների, վեհացնում, հոգով ազնվացնում, ասես թե առօրյայի փոշուց մաքրում, գեղեցկացնում է մարդու:

Երաժշտական ընկալումների և պատկերացումների աշխարհը մի սքանչելի անեզրություն է մանկան համար: Իսկ երբ աշակերտները իրենց երգերով ու նվագներով են հաղորդակից դառնում նրան, զգում են իրենց կարողությունները՝ ձայների բազմազանությամբ ու ներդաշնակությամբ ստեղծելու իրենց ուրույն գեղեցիկը, ապա երաժշտությունը դառնում է անկրկնելի վայելքի և երջանկության աղբյուր նրանց համար: Երաժշտության այդ «մարդկայնացնող հատկությունը նկատի ուներ Գյոթեն, երբ գտնում էր, թե ով չի սիրում երաժշտություն, արժանի չէ մարդ անվանվելու, ով սիրում է այն, կես մարդ է, իսկ ով զբաղվում է նրանով, նա ամբողջական մարդ է»:

Վ.Ա.Սուխումլինսկին կյանքի փաստերի հիման վրա հաստատում է, որ «Երաժշտությունը պատանեկությանը դեպի բարին, գեղեցիկը, մարդկայինն առաջնորդելու ամենահիանալի, ամենանուրբ միջոցն է: Երաժշտություն լսելով, դպրոցականը (մարդը) ճանաչում է ինքն իրեն և ըմբռնում է նախ և առաջ, որ նա՝ մարդը, գեղեցիկ է, ծնված է նրա համար, ապա դա պետք է հաղթահարել: Երաժշտության շնորհիվ մարդու (կամ դպրոցականի) մեջ արթնանում է ոչ միայն շրջապատում, այլև իր մեջ եղած վեհի, գեղեցիկի պատկերացումը»: Երաժշտությունը ինքնադաստիարակման հզոր միջոց է:

Եթե դպրոցում երգը առհասարակ իր նշանակությամբ երաժշտական այն գլխավոր ժանրն է, որին մենք դիմում ենք թե ուսուցման պրոցեսում, թե հանդեսների

ժամանակ, ապա խմբերգերը (խմբերգային երաժշտությունը) անտարակույս երաժշտական ուսուցման հիմնական ամենաբեղմնավոր, ամենաարդյունավետ ձևն է դպրոցում:

Կ.Դ.Ուշինսկին, որ մեկն է այն մանկավարժներից, որոնք սերտորեն կապված լինելով ժողովրդի հետ, լավ էին ըմբռնում զանգվածային հոգեբանությունը, ինչպես և արվեստի դերը այդ հոգեբանությունը վերափոխելու գործում, խանդավառությամբ գրում էր. «Ինչպիսի հզոր ուժ է խմբերգային երաժշտությունը…Խմբերգի մեջ կա ոչ միայն մարդու աշխուժացնող և թարմացնող մի բան, այլև ինչ-որ բան, որ կազմակերպում է աշխատանքը, համերաշխորեն երգողներին տրամադրում է համերաշխ գործի… Նա անհատների զգացմունքները միաձուլում է մի ուժեղ զգացման մեջ և տարբեր սրտերը ձուլում դարձնում ուժգնորեն բաբախող մի մեծ սիրտ: Իսկ սա շատ կարևոր է դպրոցում, որտեղ ընդհանուր ջանքերով են հաղթահարվում ուսման դժվարությունները: Երգի մեջ, բացի այդ, ինչ-որ բան կա, որ դաստիարակում է հոգին, մանավանդ զգացմունքը, ըստ որում զուտ մարդկային զգացմունքը»[8]:

Միայն երաժշտականության նման զարգացման ձգտումը թույլ է տալիս դիտել երաժշտական կրթությունը որպես գեղագիտական գաղափարների զարգացման խորապես կարևոր և անհրաժեշտ գործընթաց: Այս գործընթացում նրանց ոչ միայն պետք է տալ օգտակար երաժշտական հմտություններ և գիտելիքներ. Առաջին հերթին անհրաժեշտ է զարգացնել հենց այն ամենը, ինչը զարգանում է դանդաղ ու դժվարությամբ:

Նման թիրախային կարգավորմամբ երաժշտության դասերը պարզվում է, որ ամենաարդյունավետ մեթոդներից են գեղագիտական գաղափարներ զարգացնելու համար՝ մեթոդ, որը հիմնված է երաժշտության նկատմամբ հոգեբանական ռեակցիայի վրա, որը բնորոշ է ցանկացած երեխայի:

Երաժշտությունը օգնում է դաստիարակել երեխաների երաժշտական ընկալումը, բարելավել նրանց շարժումները և զարգացնել երաժշտական կերպարը ստեղծագործորեն մարմնավորելու կարողությունը: Բացի այդ, նրանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ առաջադրանքը (մեկը օգնում է տիրապետել

[8] Ушинский К.Д., Собрание сочинений, 1948, т 3, стр.162

որոշակի շարժիչ հմտության, մյուսը երեխաների ուշադրությունն ուղղում է երաժշտության այս կամ այն հատկանիշի արտացոլմանը և այլն):

Ինչպես մարդու հոգևոր գործունեության մյուս տեսակները, երաժշտությունը աշխարհը ճանաչելու միջոց է, որը տրվում է մարդուն, որպեսզի նա սովորի հասկանալ ինքն իրեն, տեսնել Տիեզերքի գեղեցկությունը և հասկանալ կյանքի իմաստը: «Երաժշտությունը զգացմունքների լեզուն է», - ասաց Ռոբերտ Շումանը: Բայց երաժշտությունը սկսեց սովորել զգացմունքներ արտահայտել միայն Վերածննդի դարաշրջանի վերջում՝ 16-17-րդ դարերի վերջում: Դա այն ժամանակն էր, երբ մարդը գիտակցում էր իրեն որպես մտածելու, զգալու, ստեղծագործելու ընդունակ անձնավորություն, երբ աշխարհիկ արվեստը ծաղկեց ու ծնվեց օպերան: Մարդկային կրքեր-աֆեկտների արտահայտումը 18-րդ դարում դարձավ երաժշտական արվեստի առաջնային խնդիրը, իսկ ռոմանտիզմի դարաշրջանում հույզերի և սենսացիաների աշխարհը դառնում է այն հիմնական տարածքը, որին դիմում են կոմպոզիտորները թեմաներ, պատկերներ և նույնիսկ միջոցներ փնտրելու համար:

Եթե գրականությունը խոսքի արվեստ է և երաժշտությունը՝ «ձայնարվեստ», հնչողական արվեստ, որ ընկալվում է լսողության միջոցով և զարգացնում լսողական զգացողությունը, ապա նկարչությունը, տարածական-տեսողական պատկերացումների արդյունք լինելով, գործ ունեն տեսողական զգացողության հետ, և դպրոցում նրա առաջին, նախնական կոչումը պետք է լինի հենց տեսողական զգացողության և տեսողական հիշողության զարգացումը:

Եզրակացություն

Այսպիսով, ամեն մի ժողովուրդ, խոսակցական լեզվից բացի ունի նաև երաժշտական լեզու: Յուրաքանչյուրի սուրբ պարտքն է լավ իմանալ իր մայրենի լեզուն և երաժշտական լեզուն: Քանզի երաժշտությունը կյանքի տարբեր իրավիճակներում մեծ դեր է խաղում: Ոչ մի տոնակատարություն չի անցնում առանց երաժշտության: Երգը կարող է բարձրացնել մարդկանց տրամադրությունը, թեթևացնել վիշտն ու հույզերը կամ խորասուզել մտորումների, երազանքի մեջ:

Հանրակրթական դպրոցում երեխաների երաժշտական դաստիարակության հիմնական նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորության դաստիարակությունն է, կյանքի և երաժշտության միջև կապի ստեղծումը: Մատաղ սերնդի դաստիարակության գործում նշանակալից դեր է կատարում գեղագիտական դաստիարակությունը, որը մեծապես նպաստում է կազմակերպելու ոգով առողջ, կուլտուրական, բազմակողմանի զարգացած և պատրաստված քաղաքացիներ: Հանդիսանալով արվեստի ճյուղերից մեկը, երգը օգնում է իրագործելու, զարգացնելու երեխաների գեղագիտական դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակություն ասելով մենք հասկանում ենք նոր սերնդի դաստիարակության այն բնագավառը, որը գեղեցիկի զգացողություն է առաջ բերում և զարգացնում նրա մեջ՝ դրանով լցնում դպրոցական պատանու հոգին, որը սովորեցնում է տեսնել, հասկանալ ու գնահատել գեղեցիկը և վսեմը թե՛ բնության մեջ, թե՛ կյանքում և թե՛ արվեստի բնագավառում, որը մարդու մեջ հակում է առաջ բերում իր ամբողջ կյանքի ընթացքում մշտապես հետաքրքրվելու արվեստի նորանոր արժեքներով և հասնելու գեղեցիկի ավելի նուրբ ու խոր զգացողության և լիակատար ըմբռնման:

Արվեստը անգնահատելի միջոց է գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կարողությունների ձևավորման գործում, որը հաղորդակից է դարձնում աշակերտին արվեստի միջոցով միջառարկայական կապերի ուսուցման գործընթացին:

Գրականության ցանկ

1. Աթայան Ռ.Ա.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան,1974:
2. Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1982, էջ 10:
3. Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Եր.,1979, էջ 169:
4. Միքայելյան Համլետ, Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը, «Մաթեմատիկան դպրոցում», Գիտամեթոդական ամսագիր, Թիվ 4(107), 2016, էջ 3-18:
5. Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:
6. Ушинский К.Д., Собрание сочинений, 1948, т 3, стр.162
7. https://infourok.ru/